ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ԿՅԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

Վ Ա Հ Ա Ն Թ Ո Թ Ո Վ Ե Ն Ց

«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»

(հատված)

Բ Ե Մ Ա Գ Ի Ր

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԱՐ Ա

Հաղորդավար- Եվա Ղևոնդյան

Դատավոր- Հրանտ Իսունց

Մեղադրյալ- Նոյ Զեյնալյան

Առաջին վկա- Մանե Ավագյան

Երկրորդ վկա- Տիգրան Ալեքսանյան

ԱՐԱՐ Բ

Հեղինակ-Նոյ Զեյնալյան

Հայր-Հրանտ Իսունց

Մայր- Մանե Ավագյան

Ծառա (Գոգո)- Տիգրան Ալեքսանյան

Աղախին (Օղաբեր)- Էլինա Հարությունյան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ: Բարև ձեզ, հարգելի՛ ներկաներ, այսօր մենք անդրադառնալու ենք հայ գրող Վահան Թոփովենցի մեղադրական գործին: Հայ, ինչու չէ նաև համաշխարհային գրականության այս երախտավորը հին հռոմեական ճանապարհներով եկել, հասել է մեր հայրենիք, որպեսզի գրականության ենթարկվի՝ այնուհանդերձ դառնալով հավերժի ճամփորդ: Ո՞վ է Թոթովենցը, ո՞րն է նրա մեղքը. Այդ հարցերի պատասխաններն ենք փորձելու ստանալ՝ ուսումնասիրելով նրա գրքերը, նամակները և հուշագրությունները:

ՀԵՂԻՆԱԿ: 1936թվական հայ գրականության ամենապայծառ կյանքերից մեկը՝ Վահան Թոթովենցը, գրեց ինքնակենսագրականը գրականագետների ապագա սերնդի համար: Թոթովենցն իր ինքնատիպ գրականությամբ և ազգանպաստ գործունեությամբ արդեն հասցրել էր արժանանալ գնահատանքի և չէր կարող անտեսվել համայնավարների կողմից: Կարճ ժամանակ անց գրողի ինքնակենսագրությունը որպես փաստաթուղթ կցվեց նրա մեղադրական գործին: Թոթովենցի կյանքում շատ են եղել դժվարությունները: Գրողը ծնվել է 1889թվականին Խարբերդի Մեզիրե քաղաքում:

ՆՈՑ: Մայրս գնում էր գոմ՝ կովը կթելու: Գնում է և երկար ժամանակ չի վերադառնում: Քյա՛, աղջի՛, տե՛ս՝ ինչ եղավ,- բացականչում է հորաքույրս և գնում գոմ, տեսնում է մայրս նստած, ձեռքին էլ մի կապուտաչյա երեխա. Այդ երեխան ես էի:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ: Այսօր լսելու ենք քաղաքական հանցանքի մեջ մեղադրվող հայ մտավորականի, հասարակական գործչի գործը: Ոտքի՛, դատարանն է գալիս:

ԴԱՏԱՎՈՐ: Դուք մեղադրվում եք ֆաշիստական գործունեություն ծավալելու, նացիոնալիստական խմբի անդամ լինելու մեջ: Ցուցմունքներ տվե՛ք ձեր գործունեության վերաբերյալ:

ՄԵՂԱԴՐՅԱԼ: Անձամբ ոչ մի խմբի մեջ չեմ եղել, որևէ հակահեղափոխական գործունեության չեմ մասնակցել:

ԴԱՏԱՎՈՐ: Անգլիական հետազոտության հետ ի՞նչ կապ ունեք: Որպես գործակալ Դուք տվյալներ հայտնե՞լ եք հայ մտավորականների, նրանց գործունեության, առհասարակ երկրում տիրող ամեն ինչի վերաբերյալ:

ՄԵՂԱԴՐՅԱԼ: Ես ապավինում էի Անգլիայի խնամակալությանը, կողմ եմ Խորհրդային Միության կազմից Հայաստանի դուրս գալուն:

ԷԼԻՆԱ: Լսենք առաջին վկայի ցուցմունքը:

ԱՌԱՋԻՆ ՎԿԱ: Վահան Թոթովենցին բաժին էր ընկել գաղթականի ճակատագիրը: Գրողն ապրել է Հայաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում և վերջապես՝ Ամերիկայում: Նյու Յորքում գրողը ստացել է բարձրակարգ կրթություն, գրողի համար Ամերիկան կարող էր գրական դիրքի դրսևորման հորիզոններ բացել, սակայն, երբ հայրենիք գնալու առիթ ընձեռնվեց, Թոթովենցը չհապաղեց: Մինչև 1936 թվականը Վահան Թոթովենցը խորհրդային գրականության մեջ ամենաբեղմնավոր գրողներից մեկն է եղել: Նա գրել է շուրջ երկու տասնյակի հասնող դրամատիկական երկեր և ամբողջացրել պատմվածքների ժողովածուն: Վահան Թոթովենցը, սոսկ հայրենասիրական նկրտումներից ելնելով, հայ իրականության մեջ նոր բարեփոխումներ է մտցնում, և չի կարելի մեղադրել հայրենասեր մարդուն՝ հակահեղափոխական պիտակներ վերագրելով:

ԷԼԻՆԱ: Լսենք երկրորդ վկայի ցուցմունքը:

ԵՐԿՐՈՐԴ ՎԿԱ: Կարելի է ասել Խորհրդային Հայաստանում Վահան Թոթովենցի կյանքը շատ լավ դասավորվեց. Նա սկզբնական փուլում մեկ տարուց ավել աշխատել է Խաչատուր Աբովյանի դպրոցում, նա դասավանդում էր ֆրանսերեն, հայոց լեզու և գրականություն: Հետո նրան նկատեցին, և նա անցավ Երևանի պետական համալսարան, այնտեղ դասավանդում էր անգլերեն լեզու և ֆրանսերեն գրականություն, նա

դարձավ այնտեղի ակադեմիայի քարտուղարը։ Չի կարելի պայծառ մտավորականին անհիմն մեղադրանքներով դատապարտել։

ԴԱՏԱՎՈՐ։ Դուք մեղադրվում եք Անդրֆեդերացիայի ղեկավարության մեջ, հայտնել եք անձամբ ընկեր Բերիյին։ Հետաքննությունը Ձեզանից պահանջում է անկեղծ ցուցմունքներ։

ՄԵՂԱԴՐՅԱԼ։ Ես որոշեցի անկեղծորեն խոստովանել մեր բոլոր հանցանքները։ Հնարավոր է, որ ես շփոթվեմ, լրացուցիչ հարցերով ամբողջացրե՛ք հարցաքննությունը։

ԴԱՏԱՎՈՐ։ Վերջապես պետք է խոստովանեք ձեր կատարած հանցանքը։

ՄԵՂԱԴՐՅԱԼ։ Այո՛, ես հակահեղափոխական խմբի անդամ եմ, տարել եմ վնասարարական աշխատանքներ։ Դուք եք ինձ ստիպում, որ ես խոստովանեմ չգործածս հանցանքը։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ։ Դատարանը հեռանում է վճիռ կայացնելու։

ԱՌԱՋԻՆ ՎԿԱ։ Լուսավոր անհատներին վիճակվում է դժվար ճանապարհ, նրանց վայել չէ հասարակ մահկանացու հետ հասարակ գոյակերպը։ Սևակը կասեր. «Ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած։ Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին և ժամանակից առաջ են ընկնում։ Դրա համար էլ չեն ներում նրան»։ Այո՛, չներեցին։

ԷԼԻՆԱ։ Դատարանը վերադառնում է վճիռը հրապարակելու։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ։ Ոտքի՛, դատարանն է գալիս։

ԴԱՏԱՎՈՐ։ Դատարանը որոշեց ծանրագույն հանցանքի համար մեղադրյալին դատապարտել գնդակահարության։ Մեղադրյա՛լ, մահապատժից առաջ որևէ ցանկություն ունե՞ք։

ՄԵՂԱԴՐՅԱԼ։ Այո՛, պարո՛ն դատավոր, թու՞յլ կտաք առանձնանալ մի քանի րոպեով։ Ուզում եմ մենակ մնալ հուշերիս հետ, վերադառնալ մանկությանս աշխարհը։ Խնդրում եմ ինձ հնարավորություն տվեք վայելելու թանկ ու անմոռաց հուշերս, ուր մայրս է, հայրս, քույրերս, եղբայրներս, ծննդավայրս, հայրենի տունս։

ԴԱՏԱՎՈՐ։ Հարգենք մեղադրյալի կամքը, թող առանձնանա մեղադրյալի սենյակում։

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀԵՂԻՆԱԿ: (հեղինակը քայլելով անցնում է սենյակի երկարությամբ)

Ես կարծում եմ՝ աշխարհում եղել են երկու քրիստոնյա, մեկը ինքը՝ Քրիստոսը՝ հրեա, մյուսը՝ մայրս՝ հայ: (Սենյակ, որտեղ ծալապատի նստած մայրը աղոթում է, ապա բացում Ավետարանը)

ՀԱՅՐ: (մտնելով սենյակ) Դու դարձյալ կարդու՞մ ես այդ ցնդաբանությունը:

ՄԱՅՐ: Աստծո սիրուն, աղաչում եմ քեզ այդպես մի՛ ասա, ես միայն ջանում եմ իրագործել Ավետարանի պատվիրանները՝ միաժամանակ աղերսելով Աստծուն, որ ների քո մեղքերը:

ՀԱՅՐ: Էհ, ասած-չասած դու մեկ է՝ չես փոխվում: Գնացի:

ՄԱՅՐ: (արագ տեղից վեր կենալով՝ մոտենում է ճանապարհում՝ հետևից աղոթելով և ասելով)

Աստվա՛ծ, ների՛ր նրան, նա այնքան էլ անաստված չէ: (ապա կանչում է ծառային) Գոգո՛, Գոգո՛:

ԾԱՌԱ: Ի՞նչ կա, տիկի՛ն:

ՄԱՅՐ: Վերցրու՛ այս մետաղադրամները, այսօր պատարագ է մատուցվելու, իմ անունից բաժանի՛ր աղքատներին, բայց ոչինչ մի՛ ասա տանեցիներին:

ԾԱՌԱ: Բարի, տիկի՛ն, պարոնը, որ իմացավ, շատ կբարկանա:

ՄԱՅՐ: Գնա՛, Գոգո, չի իմանա: (Մայրը դուրս է գալիս սենյակից, դրսում լվացարարուհին լվացք է անում, մայրը մոտենում է և ասում) Ի՞նչ կենես, Օղաբե՛ր:

ՕՂԱԲԵՐ: Լվացքը, տիկի՛ն:

ՄԱՅՐ: Տու՛ր, տու՛ր, ես կկախեմ պարանից:

ՕՂԱԲԵՐ: Ախր տիկի՛ն ծառան, որ իմացավ, ինձ կսպանե:

ՄԱՅՐ: Ոչինչ էլ չի իմանա: Ի՞նչ է, ձեզ Աստվա՞ծ չի ստեղծել, Աստծո առաջ բոլորը հավասար են: (վերջացնելուց հետո վերցնում է ավելը, ավլում տները, գնում խոհանոց, լվանում ամանները ու սրբում):

ՄԱՅՐ: Օ՛ֆ, այսօր էլ մթնեց, հոգնեցի, շատ եմ հոգնել երևի տարիքս եմ առել:(մայրը կանչում է) Գոգո՛, Գոգո՛, աղայի վերադառնալու ժամն է: Էշն ուղարկե՞լ ես:

ԳՈԳՈ: Տիկի՛ն, հենց նոր ուղարկեցի:

ՄԱՅՐ: Ասա մանչերուս՝ փոխեն շորերը, հորը պիտի դիմավորեն: (Հանում է գոգնոցը, սանրում մազերը):

ՀԱՅՐ: (Ներս է մտնում հայրը) Նորեն դու դարձյալ դու՞րս ես եկել արիսոկրատիզմի սահմաններից: (Մայրը գլուխը կախում է) Քանի անգամ ասեմ, քեզ մի՛ ցածրացնի, ե՞րբ պիտի խանում դառնաս: Կարո՞ղ է

էլի էն սատանա քահանային հյուր ես կանչել, ոսկե դրամն էլ ձեռքը դրել։ Բա՛վ է, բա՛վ. օրգանական ատելություն կզգամ դեպի էդ քահանաներ։

ՄԱՅՐ։ Չէ՛, ի՞նչ ես ասում։

ՀԱՅՐ։ Գոգո՛, Գոգո՛։

ԾԱՌԱ։ Հա մե, աղա՛։

ՀԱՅՐ։ Շուտ սեղան դի՛ր, խանումի բազմոցը բարձերով պատի՛ր, խանումին պատվի՛ր, հոգնած է, երևի էլի խառնվել է աղախինների գործին։ Չի փոխվում էլի, չի փոխվում։ (Մայրը մոտենում է հորը, ժպտում, բռնում ձեռքը ու սեղմում երեսին)...

Բոլորը դուրս են գալիս, շարունակում է քայլել սենյակում ապա կանգնում է ասելով՝

ՀԵՂԻՆԱԿ։ Երկուսն էլ համառ էին. հայրս համառ արիստոկրատ էր, մայրս՝ համառ դեմոկրատ։ Մինչև վերջ էլ հայրս չկարողացավ համակերպվել մորս դեմոկրատիզմի, և մայրս էլ՝ հորս արիստոկրատիզմի հետ։

ԷԼԻՆԱ։ (Կուլիսներից) Կոծում են հողմերը, աշխարհը ցուրտ է, փակեցե՛ք դուռը աշխարհի դեմ։

ՄԱՅՐ։ Տու՛ր թախի՛ծդ ինձ, մանու՛կ իմ, երգն իմ կողերի, ցնծա գարնան մեջ, գարու՛ն իմ ցնծագին, վազի՛ր բաց ու դալար դաշտերում, իմ եղնի՛կ թեթևասույր, սուրա՛ փրփադեզ ալիքների վրա, ժպտա՛ մանկան մաքրությամբ, ջերմագի՛ն է աշխարհը, իմ մանու՛կ, իմ ծա՛ռ երկնասլաց, իմ սե՛ր։

ՆՈՅ (ՀԵՂԻՆԱԿ)։ Մայրս՝ նա այնքան նման էր մեր պարտեզի նոճուն։ Բայց մայրս ժպտում է մեր կապույտ լեռներից բարձրացող արևի միջից։ Տեսնում եմ նրա ծամերը՝ արևի շողերին խառնված, և լսում եմ նրա շողերի ձայնը։ Եվ բացվում է մի մեծ առավոտ, որի թևերը ոսկեզօծում են իմ հոգու մռայլ ակունքները, սավառնում է տիեզերական ցնծությունը, արևի միջից լսում եմ նրա ձայնը։ Արևը հենց ինքը՝ մայրս է՝ խարտյաշ աչքերով և ոսկյա մազերով։ Թափվում է կանաչների վրա նրա ոսկեհունչ երգը։ Ողջ դալարն է սարսռում, իմ ջերմագին մոր սիրտն է շրշնջում բոլոր պարտեզների, բոլոր ծաղիկների բաժակներում։ Ըմպում եմ վարդի բույրը, տանձն՝ ինչպես մորս կաթը, իջնում է նորից գիշերը՝ խաղաղ, զովագին, աստղասարսուռ, անհուն մի գիշեր։ Մայրս գնաց արևի հետ։ Մա՛յր իմ, գալիս եմ քեզ մոտ, տա՛ր ինձ։ Քո մայրական տաք գրկում ես ինձ մենակ չեմ զգա, գուրգուրի՛ր ինձ, ինչպես մանուկ ժամանակ թևերդ փռի՛ր ինձ վրա, տաքացրու՛ որդուդ սառչող մարմինը։

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Հարությունյան Սոնա, ուսուցչուհի, ղեկավար

Զեյնալյան Նոյ, 7-րդ «Ա» դասարանի աշակերտ

Ալեքսանյան Տիգրան, 7-րդ «Ա» դասարանի աշակերտ

Հարությունյան Էլինա, 7-րդ «Ա» դասարանի աշակերտուհի

Իսունց Հրանտ, 7-րդ «Ա» դասարանի աշակերտ

Ղևոնդյան Եվա, 7-րդ «Ա» դասարանի աշակերտուհի

Ավագյան Մանե, 7-րդ «Ա» դասարանի աշակերտուհի